«ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԹԱՓԱՆՑԻԿ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ (ԱՃԹՆ/EITI) ԽԹԱՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

ITAMSPE

«ԱՃԹՆ ՍՏԱՆԴԱՐՏԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ»

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

22 և 29 մարտ, 2019թ.
ՀԱՀ, ԵՐԵՎԱՆ

ԹԵՄԱ.
ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հ. Ի. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի քաղ.հասարակության խմբակցության անդամ, ԵՊՀ դոցենտ, է.գ.թ.

E-mail: harutyunmovsisyan84@gmail.com

ՀՀ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

- Ըստ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության հրապարակած տեղեկատվության (www.minenergy.am), օգտակար հանածոների հանքավայրերի պետական կադաստրում հաշվառված է հաստատված պաշարներով օգտակար հանածոների շուրջ 871 հանքավայր, 580 հանքաերևակում:







- Հայաստանում առկա է օգտակար հանածոների ավելի քան 130 տեսակ, որոնցից շուրջ 25-ը՝ մետաղական. պղինձ, մոլիբդեն, ոսկի, արծաթ, բազմամետաղներ (կապար, ցինկ), երկաթ, հազվագյուտ և ցրված տարրեր, ևն:
- ՀՀ-ում շահագործման հանձնված (արդյունահանման թույլտվություններ) շուրջ 400 հանքավայրերից և նրանց առանձին տեղամասերից 28-ը մետաղական են:

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԴԵՐԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

- ՀՀ տնտեսության մեջ մետաղական հանքարդյունաբերությունն ունի իր «կարևոր» մասնաբաժինը:

Հանքարդյունաբերության ոլորտի համախառն ավելացված արժեքը և դրա մասնաբաժինը ՀՆԱ-ում (www.armstat.am, ՀՀ ԱՃԹՆ զեկույց 2018)



Հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժինը զբաղվածության մեջ

Մետաղական հանքարդյունահանող ընկերությունների աշխատողների բաշխվածությունն ըստ սեռի, քաղաքացիության և պայմանագրի ժամկետայնության (2016-2017թթ.)



ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՀԱՐԿԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ



- Աղբյուրը՝ մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների հաշվետվություններ (ՀՀ ԱՃԹՆ զեկույց)
- մլն ՀՀ դրամ

ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՀԱՐԿԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐ



- Աղբյուրը՝ մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների և ՀՀ ՏԿԶՆ հաշվետվություններ (ՀՀ ԱՃԹՆ զեկույց)
- հազար ՀՀ դրամ

ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Ստորգետնյա (փակ) եղանակով արդյունահանում

Բաց եղանակով արդյունահանում ԲԱՑԱՀԱՆՔ

ՊԱՅԹԵՑՈՒՄ

ԲԱՐՁՈՒՄ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ

ԼՑԱԿՈՒՅՏ (ԹԱՓՈՆ)

ՄՇԱԿՈՒՄ



ՋԱՐԴՈՒՄ ԵՎ ՄԱՆՐԵՑՈՒՄ

ՀԱՐՍՏԱՑՈՒՄ

ԽՏԱՆՅՈՒԹ
(ԻՐԱՑՈՒՄ)

ՀԱՐՍՏԱՊՈՉ
(ԹԱՓՈՆ)

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ընդերքօգտագործման, հանքարդյունահանման և վերամշակման թափոններ (լցակույտ, հարստապոչ, մետաղագործական խարամ ևն)
- Հողային, Անտառային և Ջրային ռեսուրսներ
- Շրջակա միջավայրի պահպանություն
- Օդային ու ջրային ավազանների և հողային ռեսուրսների որակական փոփոխություններ, աղտոտում
- Կենսաբազմազանություն և բնական էկոհամակարգեր
- Առողջապահական խնդիրներ
- Ընդերքօգտագործման ոլորտի նկատմամբ հանրային անվստահություն

ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

- Ընդերքօգտագործման ոլորտի (հանքարդյունաբերության) ռազմավարության մշակում
- ԱՃԹՆ ստանդարտի ներդրում և ԱՃԹՆ շրջանակի ընդլայնում
- Ընդերքօգտագործման ոլորտի իրազեկվածության ապահովում, թափանցիկության և հաշվետվողականության բարձրացում
- Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրում
- Ընդերքի ռեսուրսների ողջամիտ և համալիր օգտագործում ի նպաստ երկրի տնտեսության կայուն զարգացման
- Շրջակա միջավայրի (հողային, անտառային, ջրային ռեսուրսներ, կենսաբազմազանություն, բնական էկոհամակարգեր) պահպանություն
- Ընդերքօգտագործման ոլորտի նկատմամբ հանրային վստահության մթնոլորտի ձևավորում

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱԾԹՆ

www.eiti.am

Առցանց հաշվետվության համակարգ

www.reports.eiti.am

Հանրապետական երկրաբանական ֆոնդ

www.geo-fund.am

ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն (բնական պաշարներ)

www.minenergy.am

ՀՀ Բնապահպանության նախարարություն

www.mnp.am

Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն

www.armmonitoring.am

30 հունվարի, 2019 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՃԹՆ-ի առաջին ազգային զեկույց (2018) 2016 և 2017 թթ. տեղեկատվությամբ

https://www.eiti.am/hy/annual-reports/2018/

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑԵ՞Ր

ԹԵՄԱ.
ԱՃԹՆ-Ի ՍՏԱՆԴԱՐՏԻ 2-ՐԴ ՊԱՀԱՆՋ.
ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿ, ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ) ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

- ✓ *ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ ԵՎ ՖԻՍԿԱԼ ՌԵԺԻՄԸ*
- ✓ *ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԳՐԱՆՑՈՒՄԸ*
- ✓ *ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ*
- ✓ *ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ*

Հ. Ի. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի քաղ.հասարակության խմբակցության անդամ, ԵՊՀ դոցենտ, է.գ.թ.

E-mail: harutyunmovsisyan84@gmail.com

ԱՃԹՆ-Ի 2-ՐԴ ՊԱՀԱՆՋ. Իրավական և ինստիտուցիոնալ շրջանակը, ներառյալ՝ պայմանագրերի և լիցենզիաների տրամադրումը

ԱՃԹՆ-ն պահանջում է արդյունահանող ոլորտի կառավարման կանոնների վերաբերյալ տեղեկությունների բացահայտում՝ շահագրգիռ կողմերին հնարավորություն ընձեռելով

- հասկանալու հետախուզման և արդյունահանման իրավունքների շնորհման օրենքներն ու ընթացակարգերը,
- արդյունահանող հատվածին վերաբերող իրավական, կարգավորիչ և պայմանագրային շրջանակները,
- Պետության՝ ոլորտի կառավարման գործում ունեցած ինստիտուցիոնալ պարտականությունները:

Իրավական շրջանակի և ընդերքօգտագործման իրավունքների շնորհման թափանցիկության վերաբերյալ ԱՃԹՆ-ի պահանջները ներառում են

- ✓ (2.1) իրավական դաշտը և ֆիսկալ ռեժիմը,
- ✓ (2.2) լիցենզիաների (թույլտվությունների) տրամադրումը,
- ✓ (2.3) լիցենզիաների (թույլտվությունների) գրանցումը,
- ✓ (2.4) պայմանագրերը,
- ✓ (2.5) իրական սեփականությունը,
- ✓ (2.6) արդյունահանող ոլորտում պետության մասնակցությունը:

2.1 ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ ԵՎ ՖԻՍԿԱԼ ՌԵԺԻՄԸ

ա) ԱՃԹՆ-ն իրականացնող պետությունները պետք է բացահայտեն արդյունահանող ճյուղերի ոլորտը կարգավորող իրավական դաշտի և ֆիսկալ ռեժիմի նկարագրությունը: Այս տեղեկությունները պետք է ներառեն ֆիսկալ ռեժիմի համառոտ նկարագրությունը, այդ թվում՝ ֆիսկալ ապակենտրոնացման աստիճանը, համապատասխան օրենքների ու կանոնակարգերի ընդհանուր նկարագրությունը և տեղեկատվություն կառավարության համապատասխան գործակալությունների դերի ու պարտականությունների վերաբերյալ:

բ) Այն դեպքում, երբ կառավարությունը նախաձեռնել է բարեփոխումներ, խրախուսվում է բազմաշահառու խմբի կողմից այդ բարեփոխումների փաստաթղթավորման ապահովումը:



EY ԱՃԹՆ զեկույց ARMENIA EITI Extractive Industries Transparency Initiative

3. ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՀ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

3.1 Հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող օրենսդրությունը և ֆիսկալ ռեժիմը (պահանջ 2.1)

Ա. Իրավական դաշտը և իրավական ակտերի նկարագրություն

ՀՀ-ում ընդերքը պատկանում է պետությանը և համարվում վերջինիս բացառիկ սեփականությունը:

ՀՀ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ
ՀՕ-280-Ն
Ընդունվել է 28.11.2011

ՀՀ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ. ԴՐԱՆՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն
- «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ
- Բնապահպանության նախարարություն
- Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին
- «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ
- ՀՀ ԲՆ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ
- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
- Առողջապահության նախարարություն
- Պետական եկամուտների կոմիտե
- Համայնքային՝ Տեղական ինքնակառավարման մարմիններ

ՖԻՍԿԱԼ ՌԵԺԻՄԸ

Ընդերքօգտագործման վճարներ

- Ռոյալթի (բնօգտագործման վճար)
- Բնապահպանական վճար (հարկ)
- Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման (ռեկուլտիվացիոն) վճար
- Մշտադիտարկումների իրականացման վճար
- Ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման պետական տուրք

Հարկեր

- Շահութահարկ
- Եկամտահարկ
- ԱԱՀ
- Գույքահարկ և հողի հարկ (անշարժ գույքի հարկ)

Մաքսային վճարներ

Տեղական ինքնակառավարման մարմիններին վճարվող վարձակալության և այլ վճարներ

Պետական տուրքեր (ջրօգտագործման թույլտվություն)

2.2 ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ /ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

- ✓ ԱՃԹՆ-ն իրականացնող պետությունները պարտավոր են բացահայտել ԱՃԹՆ-ի զեկույցի հաշվետու ժամանակաշրջանի ԱՃԹՆ-ի զեկույցում ներառված ընկերությունների առնչությամբ լիցենզիաների շնորհման կամ փոխանցման հետ կապված տեղեկություններ, որոնք վերաբերվում են գործընթացի նկարագրությանը, կիրառվող տեխնիկական և ֆինանսական չափանիշներին և այլն:

- ✓ Ստանդարտը խրախուսում է իրականացնող պետությունների կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի հաշվետու ժամանակաշրջանից առաջ տրամադրված լիցենզիաների վերաբերյալ նախորդ կետում ամրագրված տեղեկությունների բացահայտումը, եթե դա իրագործելի է:

- ✓ Բազմաշահառու խումբը կարող է ցանկություն հայտնել՝ ԱՃԹՆ-ի զեկույցում ներառելու լրացուցիչ տեղեկություններ լիցենզիաների տրամադրման վերաբերյալ, այդ թվում՝ մեկնաբանություններ լիցենզավորման ընթացակարգերի գործուն և արդյունավետ լինելու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ընդերքօգտագործման իրավունք

Համաձայնություն / Թույլտվություն
Ծրագիր / Նախագիծ
Երկրաբանակ. ուսումնասիրության / Ընդերքօգտագործման պայմանագիր
Լեռնահատկացման ակտ

համաձայնություն

թույլտվություն

ընդերքի երկրաբանական ուսումնասիրության

օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության

օգտակար հանածոյի արդյունահանման

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՑԵԼԸ

ԴԻՄՈՒՄ → ԷԵԲՊՆ

- ✓ դիմումատուի անվանում, հասցե (գտնվելու վայր)
- ✓ դիմումատուի պետական գրանցման վկայականի պատճեն
- ✓ աշխատանքների իրականացման համար պահանջվող ժամկետը
- ✓ ընդերքի տեղամասի նկարագրությունը և այդ տեղամասի հատակագիծը՝ ծայրակետային կոորդինատներով
- ✓ **երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագիր**
- ✓ դիմումատուի՝ ՀՀ-ում նախկինում ունեցած ընդերքօգտագործման իրավունքի մասին տվյալներ
- ✓ ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկություն, որի բովանդակությունը և դրան ներկայացվող պահանջները սահմանում է կառավարությունը
- ✓ ներկայացված փաստաթղթերի ցանկը



Համաձայնություն
Ուսումնասիրության ծրագիր
Պայմանագիր

ԾՐԱԳԻՐ

- ✓ անհրաժեշտ քարտեզագրական նյութեր
- ✓ կառավարության սահմանած դեպքերում շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ, այդ թվում՝ բնապահպանական միջոցառումների ծրագիր

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ԴԻՄՈՒՄ → ԷԵԲՊՆ ↔ ԲՆ ՇՄԱԳ ՆՀՓ

- ✓ դիմումատուի պետական գրանցման վկայականի պատճեն
- ✓ աշխատանքների իրականացման համար պահանջվող ժամկետ
- ✓ երկրաբանական ուսումնասիրության ենթակա օգտակար հանածոն(ները)
- ✓ ընդերքի հայցվող տեղամասի ընդհանուր և երկրաբանական նկարագրությունները՝ երկրաբանական քարտեզով, և հատակագիծը՝ ծայրակետային կոորդինատներով
- ✓ **երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագիրը**
- ✓ դիմումատուի՝ ՀՀ-ում նախկինում ունեցած ընդերքօգտագործման իրավունքի մասին տվյալները
- ✓ *դիմումատու իրավաբանական անձի 10 կամ ավելի տոկոս բաժնետոմս (բաժնեմաս) ունեցող անձանց անունները (անվանումը), քաղաքացիությունը (իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի պատճենը)*
- ✓ ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկություն, որի բովանդակությունը և դրան ներկայացվող պահանջները սահմանում է կառավարությունը
- ✓ ներկայացված փաստաթղթերի ցանկը

Թույլտվություն
Ուս. աշխատանքային **Ծրագիր**
Ուսումնասիրության **Պայմանագիր**

ԾՐԱԳՐԻՆ ԿԻՑ

- ✓ անհրաժեշտ քարտեզագրական նյութեր
- ✓ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը, այդ թվում՝ բնապահպանական միջոցառումների ծրագիրը
- ✓ ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանը և ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքները, օրենսգրքով նախատեսված դեպքերում նաև ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանը և վերամշակման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքները

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՅՑՈՒՄԸ

ՔԱՅԼ 1



ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՅՑՈՒՄԸ

ՔԱՅԼ 2

Իրավաբանական անձ

ԴԻՄՈՒՄ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

- Թույլտվություն
- Պայմանագիր
- Լեռնահատկացման ակտ
- Նախագիծ

ԷԵԲՊՆ

ԷԵԲՊՆ

ԲՆ, ՇՄԱՓԿ
ԱԻՆ, ՏԱԱԿ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում իրականացվող փորձաքննությունները

ԷԵԲՊՆ — Ընդերքաբանական

ԲՊ ՇՄԱՓԿ — Շրջակա միջավայրի վրա ազդեցության (ՇՄԱԳ)

ԱԻՆ ՏԱԱԿ — Տեխնիկական անվտանգության

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՅՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԸ

- իրավաբանական անձի դեպքում՝ դիմումատուի պետական գրանցման վկայականի պատճենը, նշում դիմումատուի իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի չափի մասին
- հանքավայրի շահագործման ակնկալվող ժամկետը՝ հաշվարկված առկա տեխնիկատնտեսական ցուցանիշների հիման վրա
- ընդերքի այն տեղամասի երկրաբանական նկարագրությունը (մանրամասն գծագրված հատակագծով, սպառիչ տեղեկություններով տվյալ հանքավայրի հաստատված պաշարների և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանների վերաբերյալ), որի նկատմամբ դիմումատուն հավակնում է ստանալ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք
- հաստատված օգտակար հանածոների ցանկը
- **օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծը**
- **հանքի փակման ծրագիրը**
- դիմումատուի՝ ՀՀ-ում նախկինում ունեցած ընդերքօգտագործման իրավունքի մասին տվյալներ
- *դիմումատու իրավաբանական անձի 10 կամ ավելի տոկոս բաժնետոմս (բաժնեմաս) ունեցող անձանց անունները (անվանումը), քաղաքացիությունը (իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի պատճենը), ինչպես նաև նրանց վերաբերյալ այլ տեղեկություններ՝ լիազոր մարմնի սահմանած կարգին համապատասխան*
- ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկություն
- ֆինանսական առաջարկներ և երաշխիքներ, որոնք պետք է ներառեն մանրամասներ հանքի աշխատանքի, կապիտալ և գործառնական ծախսերի վերաբերյալ
- **ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանը և համապատասխան ֆինանսական երաշխիքը, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանը և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքները**
- ՇՄԱԳ փորձաքննության իրականացման համար սահմանված պետական տուրքի անդորրագիրը

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

- **օգտակար հանածոների հանքավայրերի բացման այնպիսի եղանակներ և շահագործման համակարգեր, որոնք համապատասխանում են միջազգային լավագույն փորձին և ապահովում են հիմնական և դրանց ուղեկից օգտակար հանածոների պաշարների ողջամիտ և համալիր, տնտեսապես նպատակահարմար և բնապահպանական նվազագույն կորուստներ ապահովող արդյունահանումը, ինչպես նաև կառույցների անվտանգ և երկարատև շահագործումը**
- նախատեսվող ենթակառուցվածքների ձևավորման վերաբերյալ մանրամասներ
- առկա տեխնիկատնտեսական ցուցանիշների հիման վրա հանքավայրի շահագործման ակնկալվող ժամկետի հաշվարկը
- **շրջակա միջավայրի ազդեցության գնահատականը, այդ թվում՝ բնապահպանական կառավարման պլանը և մշտադիտարկումների ծրագրերը**
- սոցիալական ազդեցության գնահատականը, որը ներառում է վերաբնակեցման անհրաժեշտության դեպքում բնակչության սոցիալական պայմանների բարելավման դրույթներ, բնակչության կենսամակարդակի բարելավման դրույթներ, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացի մասնակցության ապահովման երաշխիքներ
- հեռացվող հողաշերտի և զուգընթաց արդյունահանվող աղքատ հանքաքարի պահեստավորումը և պահպանությունը
- աշխատանքի անվտանգության, աշխատակիցների առողջության պահպանության և շրջակա միջավայրի պահպանության սահմանված կանոնների և նորմերի ապահովումը
- խախտված հողերի վերականգնումը

Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործումը, առանց սահմանված կարգով պետական փորձաքննությունների ենթարկված նախագծի, արգելվում է:

ՀԱՆՔԻ ՓԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

- հանքի ֆիզիկական փակման ծրագիրը, որում ներառվում է ենթակառուցվածքների, մեքենաների, սարքավորումների և շինությունների ապամոնտաժումը
- օգտակար հանածոյի արդյունահանման հետևանքով խախտված հողատարածքների ռեկուլտիվացիայի, ներառյալ՝ ռեկուլտիվացիայի ծրագիրը հանքի գոյության ընթացքում (ելնելով հանքավայրի շահագործման եղանակից)
- աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիրը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով
- օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման ծրագիրը
- հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ հանքի փակման վերջնական ծրագրի կազմման հավաստումը
- հանքի փակման ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքները

2.3 ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

ԱՃԹՆ-ն իրականացնող պետությունները պարտավոր են վարել հանրությանը հասանելի գրանցամատյան կամ կադաստրի համակարգ (համակարգեր), որը (որոնք) կպարունակի արդիական և համակողմանի անհրաժեշտ տեղեկությունները՝ ԱՃԹՆ-ի զեկույցում ներառված ընկերություններին տրամադրված լիցենզիաներից յուրաքանչյուրի վերաբերյալ.

«Լիցենզիա» եզրն այս համատեքստում նշանակում է ցանկացած **լիցենզիա, լիզինգ, իրավական հիմք, թույլտվություն, պայմանագիր** կամ կոնցեսիա, որով կառավարությունն ընկերությանը (ընկերություններին) կամ անհատին (անհատներին) տալիս է նավթի, գազի և (կամ) պինդ օգտակար հանածոների պաշարներ հետախուզելու կամ շահագործելու իրավունք:

Ակնկալվում է, որ լիցենզիաների գրանցամատյանը կամ կադաստրը կպարունակի տեղեկություններ բոլոր տրված լիցենզիաների մասին, այդ թվում՝ ԱՃԹՆ-ի զեկույցում չներառված ընկերություններին և անհատներին կամ խմբերին, ում վճարումները համաձայնեցված էականության շեմից ցածր են:

Նման համակողմանի բացահայտմանը խանգարող բոլոր էական իրավական կամ գործնական խոչընդոտները պետք է արձանագրվեն և բացատրվեն ԱՃԹՆ-ի զեկույցում՝ ներառելով տեղեկատվություն այդպիսի խոչընդոտները հաղթահարելուն ուղղված կառավարության ծրագրերի և ցանկալի արդյունքներին հասնելու կանխատեսվող ժամանակացույցի մասին:

2.4 ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ

Խրախուսվում է ԱՃԹՆ-ն իրականացնող պետությունների կողմից այն բոլոր պայմանագրերի և լիցենցիաների մասին տեղեկատվության հրապարակային բացահատումը, որոնցով սահմանվում են նավթի, գազի և պինդ օգտակար հանածոների շահագործմանն առնչվող պայմանները:

Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնությունը Հայաստանում

Լիազոր մարմինն իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է նաև մետաղական օգտակար հանածո արդյունահանող ընդերքօգտագործողների հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերը և դրանցում կատարվող փոփոխությունները՝ բացառելով «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հրապարակման ոչ ենթակա տեղեկատվության (տվյալների) հրապարակումը:

Ի՞նչ է նախատեսում օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագիրը

- այն օգտակար հանածոների տեսակները, որոնց արդյունահանումը թույլ է տրվում ընդերքօգտագործողին
- լեռնահատկացման կոորդինատները
- պայմանագրի գործողության ժամկետը՝ ըստ նախագծի
- օգտակար հանածոների արդյունահանման և հումքի վերամշակման աշխատանքների ենթադրվող ժամկետները՝ ըստ փուլերի, իսկ զուգահեռաբար երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու դեպքում՝ դրանց կատարման ժամանակացույցը
- բնապահպանական կառավարման պլանը
- հանքավայրի հաստատված պաշարների մասին տեղեկություններ
- սույն օրենսգրքով և օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունների ներկայացման և աշխատանքների վերահսկման կարգը
- դրույթներ՝ ընդերքն օգտագործելիս կատարվող վճարի հաշվարկման և վճարման վերաբերյալ
- դրույթներ՝ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափի և կատարման ժամկետների վերաբերյալ
- հանքի փակման հետ կապված դրույթները
- ֆինանսական երաշխիքի կատարման պահանջ ներկայացնելու կարգը և պայմանները

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑԵ՞Ր

ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ. ընդերքօգտագործման պայմանագրերի վերլուծություն

- Դասընթացի մասնանակիցները բաժանվում են 5-6 խմբի՝ յուրաքանչյուր խմբում 5 մասնակից:

Խմբերը

- ներկայացնում են ընդերքօգտագործման պայմանագրի օրինակելի կառուցվածքը ընդհանուր կետերով
- ընտրում են օգտակար հանածոյի արդյունահանման համար հրապարակված ընդերքօգտագործման որևէ մեկ պայմանագիր և դրանից դուրս բերում պայմանագրով տվյալ ընկերությանը տրված իրավունքները և ընկերության պարտավորությունները

ԹԵՄԱ.
ԱՃԹՆ-Ի ՍՏԱՆԴԱՐՏԻ 3-ՐԴ ՊԱՀԱՆՋ.
ՀԵՏԱԽՈՒՋՈՒՄ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ

- ✓ *2010-2017ԹԹ. ՀԵՏԱԽՈՒՋՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ*
- ✓ *2016-2017ԹԹ. ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄԸ ԵՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ*
- ✓ *2016-2017ԹԹ. ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ*

Հ. Ի. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի քաղ.հասարակության խմբակցության անդամ, ԵՊՀ դոցենտ, է.գ.թ.

E-mail: harutyunmovsisyan84@gmail.com

Ամփոփ նկարագիր. ԱՃԹՆ-ն պահանջում է հետախուզման և արդյունահանման հետ կապված տեղեկությունների բացահայտում, ինչը հնարավորություն կտա շահագրգիռ կողմերին հասկանալ ոլորտի ներուժը:

Հետախուզման և արդյունահանման թափանցիկությանն առնչվող ԱՃԹՆ-ի պահանջները ներառում են՝

- (3.1) հետախուզման աշխատանքների մասին տեղեկությունները,
- (3.2) արդյունահանման մասին տվյալները,
- (3.3) արտահանման մասին տվյալները:

Երկրաբանական աշխատանքների ծավալը 2010-2017թթ., մլն ՀՀ դրամ



Աղբյուրը՝ www.armstat.am

2010–2017թթ. մետաղական հանքաքարի հաստատված քանակն ըստ մարզերի, հազար տոննա



2010–2017թթ. մետաղական օգտակար հանածոների հաստատված պաշարներն ըստ մարզերի, հազար տոննա



Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ԷԲՊՆ կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի համար

2016 և 2017 թթ. ՀՀ մետաղական հանքարդյունաբերության ոլորտի հիմնական արտադրատեսակները, դրանց ծավալը և իրացման արժեքը

Արտադրատեսակը	Ծավալի չափման միավորը	Ծավալը 2016	Ծավալը 2017	Արժեքը, մլն ՀՀ դրամ 2016	Արժեքը, մլն ՀՀ դրամ 2017
Պղնձի հանքաքար և խտանյութ	թմտ	28,743	459,273	124,540	134,788
Մոլիբդենի խտանյութ	թմտ	638	2,303	1,388	4,378
Ֆերոմոլիբդեն	տոննա	6,519	6,557	32,798	29,585
Ցինկի հանքաքար և խտանյութ	տոննա	8,901	10,869	2,534	4,104
Ոսկու հանքաքար	տոննա	14,257	1,446	279	913
Ոսկու և արծաթի համաձուլվածք	տոննա	195,864	26,010	1,722	153
	ունցիա	122,322	139,839	52,327	55,152

Աղբյուրը՝ մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների ԱԵՄՆ հաշվետվություններ

2016 2017

2016 և 2017թթ. մետաղական հանքարդյունաբերության ոլորտի հիմնական արտադրատեսակների մասնաբաժինը դրամական համամասնությամբ



Աղբյուրը՝ ԱՃԹՆ զեկույց

Պղնձի խտանյութի արտադրությունը 2016 և 2017 թթ.

ՄՈԼԻԲԴԵՆ ԵՎ ՖԵՐՈՄՈԼԻԲԴԵՆ

Մոլիբդենի խտանյութի արտադրությունն ըստ ընկերությունների 2016-2017թթ. (ԱՃԹՆ պահանջ 3.2)

Ընկերության անվանումը	Ծավալը, թմտ		Արժեքը, մլն ՀՀ դրամ	
«Ագարակի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ ՀՀ, Սյունիքի մարզ, Ագարակ	-0.7%	452 449	-3%	1,097 1,063
«Թեղուտ» ՓԲԸ ՀՀ, Լոռու մարզ, Թեղուտ	+897%	186 1,854	+1039%	291 3,314

Աղբյուրը՝ մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների ԱՃԹՆ հաշվետվություններ

2016 2017

Ֆերոմոլիբդենի արտադրությունն ըստ ընկերությունների 2016-2017թթ. (ԱՃԹՆ պահանջ 3.2)

Ընկերության անվանումը	Ծավալը, տոննա		Արժեքը, մլն ՀՀ դրամ	
«Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ ՀՀ, Սյունիքի մարզ, Քաջարան	+0.6%	6,519 6,557	-9.8%	32,798 29,585

Աղբյուրը՝ մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների ԱՃԹՆ հաշվետվություններ

2016 2017

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԻՐԱՑՈՒՄ

2016-2017թթ. պնդձի հանքաքարի և խտանյութի ներքին իրացման ծավալները և դրամական արժեքը

Ընկերության անվանումը	«Թեղուտ» ՓԲԸ	«Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Ընդամենը
Իրացված պղնձի ծավալը, թմտ	40,840 / 43,203	245 / 6,177	41,085 / 49,380
Արժեքը, մլն ՀՀ դրամ	20,003 / 23,109	98 / 3,279	20,101 / 26,388

2016
2017

Աղբյուրը՝ մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների ԱԵԹՆ հաշվետվություններ

2016-2017թթ. մոլիբդենի խտանյութի և ֆերոմոլիբդենի ներքին իրացման ծավալները և դրամական արժեքը

Ընկերության անվանումը	«Ագարակի Պղնձամոլիբդե-նային Կոմբինատ» ՓԲԸ, թմտ	«Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ (ֆերոմոլիբդեն, տոննա)	«Թեղուտ» ՓԲԸ, թմտ
Մոլիբդենի խտանյութի ծավալը	251 / 0	1,140 / 6,520	0 / 622
Արժեքը, մլն ՀՀ դրամ	708 / 0	5,243 / 40,252	0 / 2,026

2016
2017

Աղբյուրը՝ մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների ԱԵԹՆ հաշվետվություններ

ՈՍԿԻ ԵՎ ԱՐԾԱԹ

Ոսկու արտադրությունն ըստ ընկերությունների 2016-2017թթ. (ԱԾԹՆ պահանջ 3.2)

Ընկերության անվանումը	Արտադրատեսակի անվանումը	Ծավալի չափման միավորը	Ծավալը		Արժեքը, մլն ՀՀ դրամ	
«ԱՏ-Մետալս» ՍՊԸ	Ոսկու հանքաքար	տոննա	0	14,257	0	279
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	Ոսկու և արծաթի դորե համաձուլվածք	ունցիա	122,322	139,839 (+14.3%)	52,327	55,152 (+0.3%)
«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ	Ոսկու և արծաթի համաձուլվածք	գրամ	195,864	26,010 (-86.7%)	1,722	153 (-91.1%)
«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	տոննա	0	1,419	0	961
«Վայք Գոլդ» ՍՊԸ	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	տոննա	0	26.7	0	7

2016-2017թթ. ոսկու ներքին իրացման ծավալները և դրամական արժեքը

Ընկերության անվանումը	«ԱՏ-Մետալս» ՍՊԸ		«Մեղրաձոր գոլդ» ՍՊԸ		«Վայք Գոլդ» ՍՊԸ	
Չափման միավորը	տոննա		Գրամ		Կգ	
Ծավալը	0	10,855	195,864	26,010	0	26,700
Արժեքը, մլն ՀՀ դրամ	0	493	1,967	478	0	7

2016
2017

Աղբյուրը՝ մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների ԱԾԹՆ հաշվետվություններ

2010 – 2017 թթ արտահանումը, հազար տոննա ԱՃԹՆ ստանդարտի պահանջ 3.3

ՀՀ արտահանումը 2016-2017թթ., հազ. ԱՄՆ դոլար



2016 և 2017թթ. պղնձի խտանյութի արտահանման ծավալի տոկոսային բաշխումն ըստ ընկերությունների



Աղբյուրը՝ մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների հաշվետվություններ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑԵ՞Ր

ԹԵՄԱ.
ԱՃԹՆ-Ի ՍՏԱՆԴԱՐՏԻ 5-ՐԴ ՊԱՀԱՆՋ.
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ

- ✓ *ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՈԼՈՐՏԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ*
- ✓ *ԱԶԴԱԿԻՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ, ՀԱՏՈՒԿ ԾՐԱԳՐԵՐԸ*

Հ. Ի. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի քաղ.հասարակության
խմբակցության անդամ, ԵՊՀ դոցենտ, է.գ.թ.

E-mail: harutyunmovsisyan84@gmail.com

ԱՃԹՆ-Ի 5-ՐԴ ՊԱՀԱՆՋ. Եկամուտների տեղաբաշխումները

Ամփոփ նկարագիր. ԱՃԹՆ-ն պահանջում է եկամուտների տեղաբաշխումների հետ կապված տեղեկությունների բացահայտումներ, որոնք շահագրգիռ կողմերին հնարավորություն կտան հասկանալու, թե ինչպես են եկամուտները մուտքագրվում պետական և, կիրառելիության դեպքում, տեղական կառավարման մարմինների բյուջեներ:

Եկամուտների տեղաբաշխումներին առնչվող ԱՃԹՆ-ի պահանջները ներառում են՝

- (5.1) եկամուտների բաշխումը,
- (5.2) տեղական կառավարման մարմիններ կատարվող փոխանցումները,
- (5.3) եկամուտների կառավարումը և ծախսերը:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ

- ✓ Հայաստանի Հանրապետությունում, համաձայն պետական և համայնքների բյուջեների ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգման, բյուջեների կատարումն իրականացվում է միասնական դրամարկղի սկզբունքի հիման վրա: Բյուջեի եկամուտների միասնականությունը անհնար է դարձնում ճշգրտել որևէ եկամուտի հետագա տեղաբաշխումը:
- ✓ «Հայաստանի Հանրապետության Բյուջետային Համակարգի Մասին» օրենքն ամրագրում է միայն այն պահանջը, որ բնապահպանական ծրագրերի գծով պետական բյուջեով նախատեսվող ծախսերը չեն կարող պակաս լինել, քան այդ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարվա բնապահպանական և բնօգտագործման վճարների, իսկ 2020թ.-ից սկսած՝ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով փաստացի մուտքերի հանրագումարը:

ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՀԱՐԿԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ



- Աղբյուրը՝ մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների հաշվետվություններ (ՀՀ ԱՃԹՆ զեկույց)
- մլն ՀՀ դրամ

Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների՝ պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները, մլն ՀՀ դրամ



Աղբյուր *՝Տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի համար*

ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՀԱՐԿԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐ



- Աղբյուրը՝ մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների և ՀՀ ՏԿԶՆ հաշվետվություններ (ՀՀ ԱՃԹՆ զեկույց)
- հազար ՀՀ դրամ

Ընկերությունների կողմից պետական և համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված հարկային վճարումները 2016-2017թթ., մլն ՀՀ դրամ



Ընդերքօգտագործողի կողմից համայնքին կատարած փաստացի վճարումներ, ՀՀ դրամ



ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐԻ (ՀԱՐԿԻ) ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Ընդերքօգտագործողի կողմից
Բնապահպանական հարկի վճարում ՊԲ

Հարկից մասհանումների կատարում և
ուղղորդում համայնքային բյուջե

ՀՕ-188, 15 մայիսի 2001թ.

ՀՀ ՕՐԵՆՔԸ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2001 թվականի մայիսի 15-ին

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(վերնագիրը փոփ. 21.12.17 ՀՕ-269-Ն)

Հոդված 1. «Արմենիան Քափըր Փրոգրամ», «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ», «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ», «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի», «Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ», «Արարատցեմենտ», «Միկա-ցեմենտ», «Հրազդանի ՋԷԿ», «Երևանի ՋԷԿ», «Գաջեգործ», «Հայկական ատոմային էլեկտրակայան», «Նաիրիտ» գործարան և «Գաջ» փակ բաժնետիրական ընկերությունների, «Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշն» և «Գեոպրոմայնինգ Գոլդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, «Մաքուր երկաթ», «Ասկե-Գրուպ» և Չարենցավանի «Զուլակենտրոն» բաց բաժնետիրական ընկերությունների (այսուհետ՝ ընկերություններ) կողմից վճարվող բնապահպանական հարկից մասհանումներ կատարվում և առանձին տողով արտացոլվում են այն համայնքների բյուջեներում, որոնց տարածքում նշված ընկերությունների գործունեությունը թողնում է վնասակար ազդեցություն:

Համայնքների ցանկը և բնապահպանական հարկից նրանց վարչական և ֆոնդային բյուջեներ մասհանվող գումարների չափերը յուրաքանչյուր տարվա համար հաստատվում են տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով:

N 197-Ն, 27 փետրվարի, 2014 թ.

Համարը	N 197-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Աղբյուրը	ՀՀՊՏ 2014.03.12/11(1024) Հոդ.160	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	27.02.2014
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	05.03.2014
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	22.03.2014	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ (ՆԱԽԱԳԾՄԱՆ) ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2014 թվականի N 197-Ն

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ (ՆԱԽԱԳԾՄԱՆ) ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել բնապահպանական ծրագրերի մշակման (նախագծման) կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Տ. Սարգսյան**

2014 թ. մարտի 5
Երևան

N 1544-Ն, 26 սեպտեմբերի 2002թ.

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
9 հոկտեմբերի 2002 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2002 թվականի N 1544-Ն

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒ «ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՎ ԱՌԱՋԻԿԱ ՏԱՐՎԱ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(վերնագիրը լրաց., փոփ. 14.01.10 N 24-Ն, փոփ. 24.05.18 N 625-Ն)

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

(նախաբանը փոփ. 24.05.18 N 625-Ն)

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

- ✓ Ըստ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի, բնապահպանական վճարներից համայնքների վարչական և ֆոնդային բյուջեներ մուտքագրվող մասհանումները հանդիսանում են նպատակային միջոցներ և օգտագործվում են տվյալ համայնքների տարածքում բացառապես բնապահպանական ծրագրերի իրականացման համար:

- ✓ Համաձայն նույն օրենքի հոդված 3-ի՝ ծրագրի նախագիծը մշակվում է համայնքի ղեկավարի կողմից՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, տվյալ մարզի կամ համայնքի զարգացման (սոցիալ-տնտեսական զարգացման) կամ շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագրերի կամ այլ ծրագրային կամ ռազմավարական նշանակության հաստատված փաստաթղթերի հիման վրա:



2016-2017թթ. ազդակիր համայնքներին հատկացված գումարը, հազար ՀՀ դրամ

Աղբյուրը՝ տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԶՆ կողմից

ԿԱՐԵՎՈՐ Է ՀԻՇԵԼ

Մասհանումներ կատարվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝

- արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման,
- ջրային ռեսուրսներ վնասակար նյութերի և միացությունների արտահոսքի,
- ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնների հատուկ հատկացված տեղերում տեղադրման և (կամ) պահման համար

Բնապահպանական հարկի գումարներից:

Բնապահպանական վճարների վճարման և ազդակիր համայնքներին ֆինանսավորման տրամադրման գործընթացը



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑԵ՞Ր

ԹԵՄԱ.
ԱՃԹՆ-Ի ՍՏԱՆԴԱՐՏԻ 2.5-ՐԴ ՊԱՀԱՆՋ.
ԻՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

- ✓ *ԻՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ*
- ✓ *ԸՍՏ ԱՃԹՆ-Ի ՍՏԱՆԴԱՐՏԻ Ո՞Վ Է ԻՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ*
- ✓ *ՆԵՐԿԱՅՈՒՄ ԲԱՑԱՀԱՅՏ ՏՎՅԱԼՆԵՐԸ*
- ✓ *Ի՞ՆՉ ՏՎՅԱԼՆԵՐ ՊԵՏՔ Է ԲԱՑԱՀԱՅՏՎԵՆ 2020Թ. ՀՈՒՆՎԱՐԻՑ*

Հ. Ի. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի քաղ.հասարակության խմբակցության անդամ, ԵՊՀ դոցենտ, է.գ.թ.

E-mail: harutyunmovsisyan84@gmail.com

2.5 Իրական սեփականությունը

- Խորհուրդ է տրվում, որ ԱՃԹՆ-ն իրականացնող պետությունները վարեն հանրությանը հասանելի՝ արդյունահանող ոլորտում գործունեություն իրականացնելու հայտ ներկայացրած, այդ ոլորտում գործող կամ ներդրում կատարած իրավաբանական անձի (անձանց) իրական սեփականատերերի ռեգիստր՝ ներառյալ իրենց իրական սեփականատիրոջ (սեփականատերերի) ինքնությունը (ինքնությունները), սեփականության պատկանելության աստիճանը և մանրամասներ այն մասին, թե ինչպես է իրացվում սեփականության իրավունքը կամ իրականացվում հսկողությունը:
- Հնարավորության դեպքում ընկերությունների կողմից իրական սեփականության վերաբերյալ տեղեկությունները պետք է ընդգրկվեն ընկերությունների կողմից՝ արդյունահանող ճյուղերը կանոնակարգող մարմիններին, ֆոնդային բորսաներին և լիցենզավորման գործընթացի լիազոր գործակալություններին ներկայացվող փաստաթղթերում:
- Այն դեպքերում, երբ այս տեղեկությունները հանրությանը հասանելի են, ԱՃԹՆ-ի զեկույցում պետք է ներառվի ցուցում այն մասին, թե ինչպես գտնել այդ տեղեկատվությունը:
- Պահանջվում է, որ 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ իրականացնող պետությունները ԱՃԹՆ-ի զեկույցում ներառելու նպատակով հարցում անեն, իսկ ընկերությունները բացահայտեն իրական սեփականության մասին տեղեկությունները:

Ըստ ԱՃԹՆ-ի ստանդարտի. Ընկերության «իրական սեփականատերն» այն ֆիզիկական անձն (անձինք) է, ում փաստացի ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում կամ ում հսկողության ներքո է գտնվում է տվյալ իրավաբանական անձը:

ԻՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ

տեղեկատվական տեսահոլովակ - https://youtu.be/RL-DrQDNrv0

Իրական սեփականատերերի բացահայտում - Հայաստան

- ✓ 2018թ. հունվարի 1-ին ՀՀ ԱՃԹՆ-ն հրապարակեց «ՀՀ իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզը»:
- ✓ 2018թ. մշակվել են ոլորտի իրական սեփականատերերի (ԻՍ) բացահայտումը և հանրային ռեգիստրի ստեղծումն ապահովող օրենքների նախագծերը (փաթեթ) և տրվել է ԻՍ սահմանումը:
- ✓ Փաթեթով առաջարկվում է լրացումներ և փոփոխություններ կատարել ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» և «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքներում:
- ✓ Օրենքների փաթեթը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է Ազգային ժողով:
- ✓ Համաձայն ԱՃԹՆ-ի պարտադիր պահանջի՝ Հայաստանում 2020թ. հունվարից պետք է հանրությանը հասանելի լինի իրական սեփականատերերի հանրային ռեգիստրը:

ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԸ

- ԱՃԹՆ-ի զեկույցում ներկայացվել է 2018թ. դրությամբ հասանելի տեղեկատվությունը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՍՊԸ) կազմակերպաիրավական ձև ունեցող հանքարդյունահանող ընկերությունների մասնակիցների վերաբերյալ՝ ըստ ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային համակարգից ընկերությունների մասնակիցների վերաբերյալ կատարվող վճարովի հարցման (www.e-register.am):

- Ներկայումս փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) կազմակերպաիրավական ձև ունեցող ընկերությունների բաժնետերերի վերաբերյալ տեղեկատվությունը հանրորեն հասանելի չէ, քանի որ դրանց բաժնետերերի ռեեստրը վարվում է մասնագիտացված ռեեստրավարների կողմից:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑԵ՞Ր

ԹԵՄԱ.
ԱՃԹՆ-Ի ՍՏԱՆԴԱՐՏԻ 7-ՐԴ ՊԱՀԱՆՋ.
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

- ✓ *ԱՃԹՆ-Ի ԶԵԿՈՒՅՑԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԸ*

Հ. Ի. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի քաղ.հասարակության
խմբակցության անդամ, ԵՊՀ դոցենտ, է.գ.թ.

E-mail: harutyunmovsisyan84@gmail.com

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

- Արդյունահանող ոլորտի վերաբերյալ տվյալների կանոնավոր բացահայտումը գործնական փոքր նշանակություն ունի առանց հանրային իրազեկման, առանց հասկանալու, թե ինչ են նշանակում այդ թվերը, առանց հանրային բանավեճի այն հարցի շուրջ, թե ինչպես կարելի է արդյունավետ կերպով օգտագործել ռեսուրսներից ստացվող եկամուտները:
- Արդյունքների և ազդեցության հետ կապված՝ ԱՃԹՆ-ի պահանջները նպատակաուղղված են բնական ռեսուրսներից ստացվող եկամուտների կառավարման վերաբերյալ հանրային բանավեճում շահագրգիռ կողմերի ներգրավվածության ապահովմանը:
- ԱՃԹՆ-ի զեկույցները հանգեցնում են ԱՃԹՆ-ի սկզբունքների իրականացմանը՝ նպաստելով հանրային երկխոսության առավել լայն ընդգրկմանը:
- Էական նշանակություն ունի նաև, որ գործողություններ կատարվեն իրականացման ընթացքում քաղված դասերի հիման վրա, որ ԱՃԹՆ-ի զեկույցներում հայտնաբերված անհամապատասխանությունները պարզաբանվեն և, անհրաժեշտության դեպքում, նաև շտկվեն, և որ ԱՃԹՆ-ի իրականացումը դրվի հաստատուն և կայուն հիմքերի վրա:

- ✓ 7.1 Հանրային բանավեճը
- ✓ 7.2 Տվյալների հասանելիությունը
- ✓ 7.3 ԱՃԹՆ-ի զեկույցներում տեղ գտած անհամապատասխանությունները և առաջարկությունները
- ✓ 7.4 ԱՃԹՆ-ի իրականացման արդյունքների և ազդեցության ուսումնասիրումը

ԱՃԹՆ-Ի ԶԵԿՈՒՅՑԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԸ

- Ռոյալթիների (բնօգտագործման վճարների) առնչությամբ առաջացող իրավահարաբերությունների (հաշվարկման, հարկադրման, դատական քննության) մասնավոր / հանրային բնույթի վերաբերյալ օրենսդրական անորոշությունը:
- Օրենսգիրքը չի սահմանում բնապահպանական աշխատանքների ծավալների, ինչպես նաև ընդերքօգտագործողի կողմից դրանց իրականացված լինելու որոշման չափանիշներ:
- Ռեկուլտիվացիոն վճարների բազային չափ գործող ընդերքօգտագործման պայմանագրերի զգալի մասում սահմանված չէ, որի արդյունքում առաջանում է իրավական անորոշություն. օրենսդրությունը հղում է կատարում պայմանագրերին, իսկ մի շարք պայմանագրերով որևէ պարտավորություն փաստացի արձանագրված չէ:

ԱՃԹՆ-Ի ԶԵԿՈՒՅՑԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԸ

- ✓ Ընդերքօգտագործման իրավունք ունեցող իրավաբանական անձանց բաժնեմասերի/բաժնետոմսերի առուվաճառքը որևէ կարգավորման և վերահսկողության չի ենթարկվում ԷԲՊՆ-ի կողմից:
- ✓ Օրենսդրությունում բացակայում են ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումը մերժելու հիմքերը:
- ✓ Ընդերքօգտագործման իրավունքի տրամադրումը որևէ կերպ չի երաշխավորում այդ իրավունքի իրացման համար անհրաժեշտ այլ իրավունքների (ջրօգտագործման իրավունք, հողի օգտագործման իրավունք) ձեռքբերում:
- ✓ Օրենսդրությունը չի արձանագրում որևէ հստակ մեխանիզմ ընդերքօգտագործողների սոցիալ-տնտեսական պարտավորությունների շրջանակի ձևավորման և հստակեցման գործընթացում համայնքը ներկայացնող ՏԻ մարմինների մասնակցության համար:
- ✓ Աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագրի իրականացման կարգ, միջոցառումների ծավալի որոշակիացման ընթացակարգեր, ինչպես նաև նման միջոցառումների իրականացման նկատմամբ վերահսկողություն և արդյունավետության գնահատման չափանիշներ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չեն:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑԵ՞Ր

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

WWW.EITI.AM

eiti@gov.am

www.facebook.com/EITIArmenia/

@EITIArmenia

Նյութը պատրաստվել է ՀԱՀ ՊՀԿ «ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԹԱՓԱՆՑԻԿ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ (ԱՃԹՆ/EITI) ԽԹԱՆՈՒՄ» (ITAMSPE) ծրագրի շրջանակներում:
Ծրագիրն իրականացվում է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) միջոցով:
Այստեղ արտահայտված տեսակետները /կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները: